ամենայն կարգի և աստիճանի արհեստաւորներից , նա և տոկոսիքն Եկեղեցական գումարի , որէ 1300 մանէթ , որպէս արդէն անցեալ տարի Քանաքեռցիք համաձայնեցան և պայմանագրեցին , ինչպէս Արարատ պատուական լրագրի միջոցաւ հրատարակուեց (1)։ Վերջապէս աշխատեցինք որ Արժանա. Հմայեակ Վարդապետի Արշարունւոյ երկամեայ վաստակը զուր չհամարուի ժողովրդեան աչքին , որ ձնշելով իւր անձը՝ ամենայն ջերմեռանդութեամբ կ'աշխատի ձրիապէս ուսուցանել իւր Հայրենակից որդւոց՝ Կրօնագիտութիւն և Ազգային պատմութիւն , որքան կ'ներէ Եկեղեցական Դպրոցի կանոնն (2)․ որ ըստ հարցաքննութեանս ոչ սակաւ աշխատութեան պտուղ տեսի այն Դպրոցի Աշակերտաց մօտ․ Դըպրոցական կառավարութիւնն հոգալուց և ապահովելուց զկնի , և Եկեղեցական եկամտից հաշիւն տեսնելուց և կարգադրելուց զկնի՝ գնացինք Տաշբուռուն անուանով 125 տուն Հայաբնակ գիւղն , որ Շահխաթունեանց Երջանկայիշատակ Յովհաննէս Եպիսկոպոսն՝ իւր ստորագրութեան մէջն Քո-ռուխ կ'անուանէ (3)․ որ Մասից հեղեղատի նման յառաջացած՝ կուտակ կուտակ բլրոյ վերջացած տեղումն է։

Տաշբուռունից գնացինք Ղարաղշլին անուանեալ Պարսկական գիւղի հանդէպ՝ Յօշակերտ հին և խստ աւերակ դարձած քաղաքն , որ Մասի ստորոտից փոքր ինչ դէպ 'ի Երասխն երկայնացած բլրակի վերայ է շինած։ Ըստ Խորենացւոյն (4), սա պէտք է լինի Յօշակերտն աւան՝ տունն բնակութեան Յօշակայ որդւոյ Ամասիայ․ ըստ որում Արմաւիր Քաղաքից ուղղակի դէպ 'ի արևելեան հարաւ անկանի , և շինուածոց մեծ մեծ կռած կոփած Արմաւիրեան բերդի շինութեան կարծր և սևագոյն քարերի նման՝ պարզապէս ցոյց են տալի , որ Արմաւիրայ դեռ մի դար եւս յառաջ շինուած է։

Այս Յօշակերտայ բերդի մօտ մի մեծադիր քարի երեսի վերայ , որ տաշած , սրբած է և փոքր ինչ խորացրած անձրևից պահպանելոյ համար , գըտինք Արմաւիրեան նոյն իսկ բևեռագրոց նման մի արձանագիր 24 տողից բաղկացած՝ տարածուած քարի երեսին 2 հայի գազ երկայնութեամբ և մի և կէս գազ լայնութեամբ։ Բերդի հնութիւնից և արձանագրոյ ձևից երևի , որ դարձեալ Արայի և Շամիրամայ ժամանակի գրուածք է․ ուստի և նոյնպէս անհասկանալի առ այժմ մեզ․ և որպէս զի այս անյայտ չմնայ այժմեան ուսումնականներից , և գուցէ Արմաւիրեան տառերի վերայ աշխատաւորին հարկաւորի եւ՝ այս՝ արձանագրոյ տառերն, օրինակեցի միմիայն առաջին և վերջին այսինքն 1րդ և 24րդ տողերն , որ ըստ կարծեացս և ըստ արձանագրութեան կարգին․ պէտք է ժամանակի թուականն լինի , ինչպէս միշտ կ'պատահի առաջին և վերջին տողերի մէջ․ իսկ ամբողջ արձանագրութեան օրինակեղն յանձնեցի Արժանապատիւ Արշարունի Հմայեակ վարդապետին , որ հանդարտ և պարապ միջոցով կարողանայ օրինակել , և ըստ պահանջման հարկին ուղարկել Արարատ լրագրի Խմբագրութեանդ , տպագրութեամբ հրատարակելոյ համար , ըստ որում մեզ սաստիկ անձրևն չ'ներեց երկար մնալով օրինակել․ Եւ ինչպէս պատմեցին Տաշբուռունցի Քահանայք և Ղարաղշլինցի Տանուտեարք՝ քանիցս անգամ այլ և այլ լեզուագէտ մարդիկ՝ Ռուս , Գաղղիացի և այլ ազգերից օրինակել են ; որոց համար դեռ ոչ մի լրագրի մէջ կ'երևին տեղեկութիւնք։ Այսպէս շրջագայելով և տեսնելով նա և Փառախոտ և Արշակաւան հին հին քաղաքների աւերակներն , որոց այժմ բնակիչք գաւառին Ղօրղուն և Քէօհնայ — Քալէ կանուանեն Պարսկերէն , և մեր վիճակային գործերն աւարտելով՝ վերադարձանք յԵրևան։

Մեսրովբ Վարդապետ Սմբատեանց

Դեկտ. 1869 ամ

յԵրևան

# ԱԶԴԱՑԻՆ

Վեհափառ Կաթողիկոսը բարեհաճեցաւ հաստատել օրհնութեան Կոնդակաւ՝ Գառնւոյ գաւառին մէջ՝ ազգասէր ջանիւք Արժանապատիւ Մեսրոպ Վարդապետի Սմբատեանց՝ փոխ-թեմակալին Երևանայ՝ հո-

1) Արարատ Ամսագ. 1869 մարտ. Թիւ Ժ․Ա․ երես 136։
2) Արարատ Ամսագիր 1868 Հոկ. Թիւ Գ. երես 70։
5) Ստոր. Շահխաթունեանց, Հատ. Բ. երես 6։
4) Խորեն. պատմ. Ա. ժբ.

գեորգեաննիւր, և աշխարհականնիւր կազմուած Երզնկայեցւոց Ընկերութիւնը, որոյ ջանքն և բարեմիտ նպատակն պիտի լինի ձեռնարկել Խոր-վիրապայ վանուց վերանորոգութեան և նորին զանազան շինութեան աւարտման, մանաւանդ՝ նոյն վանաց Վանական Դպրոցէ շինութեան և միանգամայն խորհել և ապահովել նոյն Դպրոցի ապագայ կառավարութեան և արդիւնաւէտ զարգացման միջոցները:

Ընկերութեան անդամք հետեւեալքս են, Երժանապատիւ Ստեփաննոս Վարդապետ Վանահայր Խորվիրապայ.

Բարեկրօն Յակոբ Աղայ Քահանայ Բէկզադեանց.
» Շմաւօն Քահանայ Տէր Զաքարեանց.
Բարեպաշտ Ներսէս Եղիազարեանց.
» Գիւլնազար Խութնեանց.
» Մելիք Վարդանեանց.
» Մ. Պօղոս Շահրազեան.
» Ստեփան Մելիք-Խարայեան:

---

Ըստ խնդրանաց Հասարակութեան Շահրիարու, նոյն գեղջ եկեղեցւոյ սրահին մէջ Ծխական-դպրոց հաստատելոյ և զայն կառավարելոյ և ապագային արդիւնաւէտ զարգացնելոյ համար կազմուած Հոգաբարձութեան Անդամք, որք են՝ Բարեկրօն Մկրտիչ Քահանայ, և Բարեպաշտք՝ Դաւիթ Դը-րամբեանց, Յարութիւն Եղիաեանց և Սահակ Կարապետեանց, Վեհափառ Կաթողիկոսի օրհնութեան Կոնդակաւ հաստատեցան նոյն պաշտօնի մէջ, իրաւունք տալով միանգամայն Շահրիարու եկեղեցական գումարից տոկոսիքը գործածել ի պէտս և ի նպաստ շինութեան և կառավարութեան ծխական դպրոցին:

---

Ըստ խնդրանաց Երժանապատիւ Յաջորդի Եղիազարեան Սուքիաս Վարդապետի Պալդեանց և ժողովրդեան քաղաքին՝ Վեհափառ Կաթողիկոսը բարեհաճեցաւ շնորհել՝ նոյն քաղաքի մէջ գտնուած Ս. Էջմիածնի սեփական գետինը՝ Օրիորդաց տալով ընդարձակ Վարժարան կառուցանելոյ համար, միայն գետնոյն սեփականութիւնը միշտ Ս. Էջմիածնին պահելով:

---

## ՑՈՒՑԱԿ ՆՈՒԻՐԱՏՈՒԱՑ Ի ՆՊԱՍՏ ՇԻՆՈՒԹԵԱՆՑ ՍՐԲՈՑ ԱԹՈՌՈՑՍ.

(Շարունակութիւն*)

### Ի ՆԵՐՔԻՆ ԱԳՈՒԼԻՍ

| | | |
|---|---|---|
| Պատուական Մանուկեանց | 10 | — |
| Մաթէոս Ոսկանեան | 10 | — |
| Պօղոս Աղամալեանց | 10 | — |
| Աստուածատուր Ստեփանեանց | 5 | — |
| Յովհաննէս Զարգարեանց | 6 | — |
| Յարութիւն Շահնազարեանց | 3 | — |
| Մինաս Զարգարեանց | 3 | — |
| Եղիազար Նանաեանց | 4 | — |
| Կարապետ Յակոբեանց | 2 | — |
| Գանձապետ Գալուստ Տէր Յօհաննէսեանց | 1 | — |
| Հասարակութիւն Ն. Ագուլեաց | 16 | — |
| Հասարակութիւն քաղաքի գեղջ | 10 | — |
| Հասարակութիւն Դուսարցւոց | 2 | — |
| Հասարակութիւն Տնակերտ գեղջ | 10 | — |
| Հասարակութիւն Ռամիս գեղջ | 6 | — |
| Հասարակութիւն Ցղնայ գեղջ | 40 | — |
| Հասարակութիւն Ապահի գեղջ | 4 | — |
| Հասարակութիւն Փառակայ գեղջ | 10 | — |
| Հասարակութիւն Բիստ գեղջ | 7 | — |
| Հասարակութիւն Մսրվանու գեղջ | 2 | — |
| Հասարակութիւն Շոռոթայ գեղջ | 7 | — |
| Հասարակութիւն Գեաղ գեղջ | 3 | — |
| Հասարակութիւն Փորադաշտու | 6 | — |
| Հասարակութիւն Դազանչի գեղջ | 20 | — |
| Հասարակութիւն Նորաշէն գեղջ | 6 | — |
| Հասարակութիւն Ապրակունիս գեղջ | 8 | — |
| Հասարակութիւն Գնդութ գեղջ | 10 | — |
| Հասարակութիւն Ալապատ գեղջ | 10 | — |
| Հասարակութիւն Դարախան-բէկլու գեղջ | 15 | — |
| Հասարակութիւն Եմանայ գեղջ | 8 | — |
| Հասարակութիւն Կարմիր Վանքի գ. | 1 | — |

*) Տես թիւ Ը և Թ: